պետք նորա, զորս սպան և զորս աքսորեաց ի Մըսը։ Եւ սպան զքէհա պէկ Մուստաֆայ աղայ, զեէնկիչէր աղասի Ղարա Զաւուշ, զՊէքտաշ աղայ, զՏէլի Պրատէր խարաճլի, զՍարի Քեաթիպ թէզքէրէճի, զայսոսիկ մի մի գտեալ ի թաքստեան տեղւոջ և յայտնապէս ոչնչացոյց, և զայլս ի ծածուկ, որք մեզ չեն յայտնի. և եդ եէնկիչէր աղասի զՂարա Հասանօղլի զոմն Հիւսէին աղա։ Եւ ոչ գադարէր, և կամէր միւսանգամ ևս մեծամեծաց մինչև ցփոքունս ի ներքինեաց սեաւոցն, սենեկապետացն և նախարարացն արքունի որ ի պալատն՝ փոփոխել, զոմանս սպանանել եւ զոմանս աքսորել, որպէս արար նախ։ Այլ նոքա փութացան և վալիտէն ևս կամէր արձակել զոտքն, տեսեալ զհամարձակութիւն սորա՝ երկեաւ եւ նախարարօքն դրդեցին և ուսուցին թագաւորին, զի կոչեալ առ ինքն զՍիա[ւուշ], առեալ ի նմանէ զկնիքն՝ տայ Կիւրճի Մէհէմէտ փաշային՝ վէզիրութեան։ Եւ Կիւրճին եդեալ զՍիաւուշն ի բերդ և առնէ բազում քսակս ի նմանէ և աքսորեաց ի Մալղարայ՝ թէ ի Ղանլիճայ։ Այս եղև Հոկտեմբեր ամսոյ ԺԸ, որ Կէ օր կացաւ վէզիր Սիաւուշն։

Ցաւուրս սորա մէտրապօլիտն Սախըզոյ Ցունաց կայր աստ և էր յոյժ փառասէր և մարմնասէր կարի և անհնազանդ պատրիարքին։ Ցաւուր միում դանակս քարշեալ ի վերայ նորա թէ Դու ո՞վ ես որ հնազանդիմ քեզ. ահա՛ ես եմ պատրիարք։ Եւ մտեալ ի նայ սատանայ, որ ոչ կարէր լինել պատրիարք, ուրացաւ զՔրիստոս. և Տաճիկք ի մեծ խնդութենէ իւրեանց՝ նախարարք վէզիրին մեծացուցեալ արարին զափուճի պաշի թագաւորին, որ էառ զտուն և զկին փաշային Փիալէի սատակելոյ, որ և ընդ նմին դասեսցի և նա ի տարտարոսն յաւիտենից, յորմէ փրկեսցէ զմեզ Քրիս-